ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ղեկավարը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերի վարձակալության իրավունքի տրամադրման բաց մրցույթ

հ/հ	Հողամասի գտնվելու վայրը (հասցեն)	Հողամասի մակե-րեսը (հա)	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակութ-յունը կամ հողատեսքը	Վարձակալության ժամկետը (տարի)	Հողամասի վարձավճարի մեկնարկային չափը (դրամ)	Նախավճարի չափը, (դրամ)	Հողամասի օգտագործման նպատակը, հաղորդակցությունների առկայությունը	Հողամասի որակական հատկանիշ-ները
Լոտ 1	Գնդեվազ	0,08921	10-016-0208-0118	գյուղատնտեսա-կան	վարելահող	10	30000 տարեկան	1500	վարելահող, առկա է երկկողմանի ճանապարհ	Հողակադաստրային շրջանը՝ Վեդի Ներքին-Արփա, հողատեսքի գնահատման խումբը՝ 3
Լոտ 2	Գնդեվազ	0,15166	10-016-0209-	գյուղատնտեսա-կան	կորիզավոր այգի	10	30000 տարեկան	1500	այգի, առկա է երկկողմանի ճանապարհ	Հողակադաստրային շրջանը՝ Վեդի Ներքին-Արփա, հողատեսքի գնահատման խումբը՝ 3
Լոտ 3	Գնդեվազ	0,2	10-016-0208-0117	գյուղատնտեսա-կան	արոտավայր	25	25000 ամսական	1250	արոտավայր, դաշտային ճանապարհ առկա չէ	Հողակադաստրային շրջանը՝ Վեդի Ներքին-Արփա, հողատեսքի գնահատման խումբը՝ 5
Լոտ 4	Ջերմուկ	0,0299	10-002-0107-0007	գյուղատնտեսա-կան	այլ	10	60000 տարեկան	3000	գյուղատնտեսական գործունեության համար, առկա է դաշտային ճանապարհ	Կեչուտի ջրամբարին հարակից տարածք

Մրցույթը կկայանա 2026 թվականի հուլիսի 7-ին, ժամը 11:00-ին Ջերմուկի համայնքապետարանի նիստերի սրահում (ք. Ջերմուկ, Մյասնիկյան փողոց N 8, 2-րդ հարկ):

Մրցույթին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հայտ (յուրաքանչյուր լոտի համար՝ առանձին), մասնակցության համար սահմանված չափով վճարի (որն անկախ մրցույթի արդյունքներից՝ ետ չի վերադարձվում) անդորրագիրը (1-3 լոտերի դեպքում՝ 10000 դրամ, 4-րդ լոտի դեպքում՝ 20000 դրամ), անձնագիր (նույնականացման քարտ), իրավաբանական անձանց դեպքում՝ նաև հիմնադիր փաստաթղթեր:

Նախավճարի չափը՝ մեկնարկային վճարի 5%-ը, որը մրցույթի մասնակիցները մուծում են մրցույթի անցկացման օրը: Մրցույթում գնային սակարկության մեկ քայլի չափը սահմանվում է տվյալ մրցույթի առարկա հանդիսացող գույքի տարեկան վարձավճարի 5 տոկոսի չափով:

Նշված հողամասերում չկան ճանապարհներ, ջրատար, գազատար, կոյուղու խողովակաշարեր և էլեկտրահաղորդման գծեր, սերվիտուտներ:

Մրցույթում հաղթող կճանաչվի այն մասնակիցը, ով կառաջարկի առավելագույն վարձավճար:

Մրցույթը կանցկացվի Ձերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման մրցույթի անցկացման կանոնակարգի համաձայն: Մասնակցության հայտ ներկայացնելու, մրցույթի կանոնակարգին, ինչպես նաև լոտերով ներկայացված հողամասերի վերաբերյալ տվյալներին ծանոթանալու համար դիմել Ձերմուկի համայնքապետարան (ք. Ձերմուկ, Մյասնիկյան փողոց N 8, հեռախոս՝ 060747077):

Մրցույթին մասնակցելու հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ՝ մինչև 2026 թվականի հուլիսի 2-ը, ժամը 18:00-ը: Մրցույթի հայտատուները մինչև մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետի ավարտը կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտը:

Մրցույթում հաղթած անձը և հանձնաժողովը՝ ի դեմս նախագահի, մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը: Մրցույթում հաղթած անձն արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում կորցնում է մուծած նախավճարը և զրկվում է մրցույթը չկայանալու պարագայում հողամասն առանց մրցույթի վարձակալելու իրավունքից: Վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագրի և հողամասի հատակագծի նախագծերին կարելի է ծանոթանալ տեղում, այլ պայմանների ծանոթանալու համար կարելի է զանգահարել 028721217 կամ 060747077 հեռախոսահամարներով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ